

Պօջայ Սաֆար եւ իր եղբայրը՝ Պօջայ Նազար, եւ իրենց ժառանգները, գլխաւոր դերակատարները եղած կ'երեւին Աջերու եւ Նշխարներու յաջորդական զիւտերուն եւ փոխադրութեանց մէջ: Գաղթական Զուղայեցիները հազիւ Սպահան հաստատուած, տեղի կ'ունենայ Յովհաննու Կարապետի նշխարներու զիւտը: Նշխարները կ'անցնին Շմաւոն Եպիսկոպոսին ձեռքը, սակայն Պօջայ Նազար եւ Զուղայեցիները կը յաջողին նշխարներու մեծ մասը ձեռք բերել: Զարմանալիօրէն, եթէ իրապէս նշխարներու այս զիւտը պատահած է 1605էն կարճ ժամանակ վերջ ատեն մը, Պօջայ Սաֆար չի յիշատակուիր Դաւրիթեցիի այս վկայութեանց մէջ, որոնք առջ վիտի բերենք ամբողջութեամբ՝ Պօջայ Նազարի մասին խօսած ատեննիս:

Շահ Աբասի մեծ մտադրութիւններէն մէկն էր լատին զինուորական անկցութեամբ՝ երկու կրակի մէջ առնել թուրքիան, եւ կը կարծէր թէ ատոր համար կարեւոր խայծ մըն էր Էջմիածնի Կաթողիկոսին տեղ դահ բարձրացնել Պապէն զրկուած հոռմէադաւան կրօնաւոր մը: Այս նիւթին մասին մեզի հասած է վաւերաթուղթերու եւ վկայութեանց կարեւոր շարք մը, որոնց մասին կ'արժէ մանրամասնօրէն ուսումնասիրութիւն մը մշակել օր մը:

Շահ Աբասի մէկ ուրիշ մտադրութիւնն էր Էջմիածնի տաճարը քար առ քար հանել իր տեղէն ու փոխադրել Սպահանի մօտ տեղ մը եւ հոն վերակառուցանել զայն, տղայամտօրէն խորհելով՝ թէ բռնի ուժով դադթական այդ Հայերը այլեւս պիտի չցանկային դառնալ իրենց հայրենիքը: Արդարեւ, եթէ Շահը հետապնդէր իր այդ սխալ խորհուրդը, ատիկա Էջմիածնի վանքին ու սրբատեղիին համար իրապէս ազիտալի պիտի ըլլար: Սակայն, փոթորիկը անցաւ՝ Էջմիածինէն լոկ տասնեւհինգ քարերու Նոր Զուղայ փոխադրութեամբ: Աւելի անվնաս էր Լուսաւորչի Աջին փոխադրութեան գաղափարը: Աջը բերողները, որոնք Աջին հետ կը բերէին նաեւ ոսկեկազմ Աւետարան մը եւ արծաթեայ խաչ մըն ալ, «յորժամ մերձ եղեն քաղաքին Ասպահանու, ամենայն ազգն Հայոց, որք կային ի քաղաքս Ասպահան, որոց եւ հրաման արարեալ էր Շահն, ելին ընդ առջ Լուսաւորչի Աջոյն՝ խաչվառով եւ Աւետարանաւ, խնիօք եւ մոմեղինօք, եւ երգօք եղանակօք, եւ բազում պատուով բերեալ հանգուցին ի տուն Պօջայ Սաֆարին, ընդ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, եւ ընդ այլոց սրբութեանցն, որք ասդէն կային»<sup>11</sup>:

Նշխարներու զիւտի, Աջի եւ այլ սրբութիւններու Նոր Զուղայ փոխադրութիւնը, անտարակոյս, իր ազդեցութիւնը ունեցաւ՝ բռնի զօրութեամբ դադթական հայրենակարօտ զանգուածին վրայ, որ ըստիպուեցաւ զոհանալ ու մնալ իր տեղը: Շահեկան է Շահին պա-

11. Անդ, էջ 211: